

Դ. ՄԱՍԻՆ—ՍԻԲԻՐՅԱԿ

ԱԼՅՈՆՈՒԹԵԿԻ ՀԵՔՎԱԹՆԵՐԸ

891.715.

Մ-22


2011-05

37-Ն
Հա 2027
891-7115
Մ-22



Դ. ՄԱՄԻՆ - ՍԻՐԻՒՑԱԿ

ԱԼՅՈՆՈՒՅԿԻ ՀԵՔՅԱԹՆԵՐԸ



ԹԱՐԳՄ. Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՆԿԱՐՆԵՐԸ Բ. ԴԵԽՏԵՐԵՎԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿ ՉՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՎԱՆ

24.06.2013

3947

Լեզվ. Խմբագիր Վեսպեր
Տեխ. Խմբագիր Ս. Գասպարյան
Մրգագրիչ՝ Հ. Մանուկյան



60261-67

Պատվեր 792, Ժիրած 3000, Գլավիթի լիազոր Ա-1150
Հքաս. 3763, Պետմատի տպարան, Երեվան,
2-րդ Գնունի, № 4






ՆԱԽԱՀԵՔՅԱՅ

Նանի՛կ — նանի՛կ — նանի՛կ...

Ալլոնուշկայի մի աչիկը քնած ե, մլուսը նախում ե:
Ալլոնուշկայի մի ականջիկը քնած ե, մլուսը լսում ե:
Քնի՛ր, Ալլոնուշկա, — հիմա հեքիաթն սկսվում ե:
Հրեն, արդեն լուսամուտից նախում ե բարձր լուսինը,
հրեն, շղիկ նապաստակը փորփրեց իր բըղե թաթերով,
գալի աչքերը փալեցին դեղին կըակներով, Միշկա ար-
ջը ծծում ե իր թաթը: Ուղղակի պատուհանի մոտ ե թը-
ռել ծեր ճնճղուկը: Նա կտուցով ծեծում ե ապակին և
հարցնում: «Արդյոք շնոր կսկսվի»: Բոլորն ել ալստեղ
են, բոլորն ել հավաքվել են, և բոլորն ել սպասում են
Ալլոնուշկայի հեքիաթին:

Ալլոնուշկայի մի աչիկը քնած ե, մլուսը նախում ե:
Ալլոնուշկայի մի ականջիկը քնած ե, մլուսը լսում ե:
Նանի՛կ — նանի՛կ — նանի՛կ...



ՀԵՔԱՐ

ՅԵՐԿԱՐ · ԱԿԱՆՁ, ԿԱՐՃ · ՊՈՉ ՔԱՁ ՆԱՊԱՍՏԱԿԻ ՄԱՍԻՆ

Անտառում մի փոքրեկ նապաստակ ծնվեց և շարունակ վախենում եր: Վորևէ տեղ յեթե մի ճյուղի ճըռթկար, թռչուն վեր թռչեր, ձիան մի կույտ ընկներ ծառից, — փոքրիկ նապաստակի սիրտն ահից ճաքում եր:

Փոքրիկ նապաստակը վախեցավ մի որ, յերկու որ, մի շաբաթ, մի տարի, բայց հետո մեծացավ, և հանկարծ ճանձրացավ վախենալուց:

— Յես վոչ վոքից չեմ վախենում, — ճշաց նա անտառով մեկ, — ահա ամենեին չե՞մ վախենում, և բոլորն այստեղ են:

Հավաքվեցին ծեր նապաստակները, մոտ վազեցին փոքրիկ նապաստակի ձագերը, շորորալով յեկան — ավելացան նաև պատավ նապաստակուհիները: Բոլորն ել լսեցին, թե ի՞նչպես եր պարծենում Յերկար-Ականջ, Շլդիկ-

Աչք, կարձ-Պոչ նապաստակը: Լսեցին ու իրենց սեփական ականջներին չեցին հավատում: Դեռ չեր պատահել, վոր նապաստակը վոչ վոքից չվախենար:

— Ե՞ս, դո՛ւ, Շլդիկ-Աչք, չես վախենում գալից:

— Գալիք ել չեմ վախենում, աղվեսից ել, արջից ել. վո՛չ վոքից չեմ վախենում:

Այս արդեն բոլորովին ծիծաղաշարժ բան եր: Քրքը-ջացին դեռատի նապաստակի ձագերը, ծիծաղեցին բարի պառավ — նապաստակուհիները. նույնիսկ աղվեսի մանկն ընկած և գալի ատամների համն առած ծեր նապաստակներն ել ժպտացին: Վերջապես շատ ծիծաղելի նապաստակ ե... Այս, ինչքա՞ն ծիծաղելի լե... Յեկ բոլորն ել հանկարծ ուրախացան: Սկսեցին գլուխկոնձի տալ, թըռչկոտել սլանար, իրար առաջ կտրել, կարծես թե բոլորն ել դժվել ելին:

— Դե, այստեղ յերկար խոսելու ի՞նչ բան կա վոր, — գոռում եր վերջնականապես քաջ կտրած նապաստակը: Յեթե գալին իոն ձեռքն ընկնի, լես ինքս նրան կուտեմ...

— Այս, վորքան ծիծաղելի նապաստակ եւ: Այս, վորքան հիմար ե նա:

Բոլորն ել տեսան, վոր և ծիծաղելի լե նա, և հիմար, և բոլորն ել ծիծաղեցին:

Նապաստակները գալի մասին ելին աղմկում, իսկ գալլը վորտեղից-վորտեղ՝ բուսավ հենց ալդտեղ:

Նա ման յեկավ անտառում իր գործերով, սովեց և մտածեց: «Ա՛յ թե լավ կլինի, վոր մի նապաստակ ուտեմ», յերբ լսեց, վոր բոլորովին մոտիկ տեղում նապաստակները աղմկում-կանչում են և իրեն, գորշ գալլին են հիշում: Այն ժամանակ նա կանգ առավ, հոտ քաշեց ողից և սկսեց գաղտագողի մոտենալ:

Գալլը բոլորովին մոտեցավ խաղով տարված նապաստակներին և լսեց, թե ի՞նչպես են նրանք իր վրա ծիծաղում, բայց ամենից շատ ծիծաղողը — Շլդիկ-Աչք

Յերկար-Ականջ, Կարճ-Պոչ պարծենկոտ նապաստակն եր:
«Ե՞լ, լեղբայր, սպասի՛ր, այ, յես հենց քեզ ել կու-
տեմ»— մտածեց գորշ գալլը և սկսեց դիտել թագստո-
ցից, թե վո՛ր նապաստակն ե պարծենում իր քաջու-
թյամբ: Իսկ նապաստակները վոչինչ չելին տեսնում և
առաջվանից ել ավելի ելին ուրախանում: Բանը վեր-
ջացավ նրանով, վոր պարծենկոտ նապաստակը բարձրա-
ցավ մի կոճղի վրա, նստեց հետեւի թաթիկներին և ա-
սաց:

— Ե՛լ, դուք, վախկոտներ, լսեցե՛ք: Լսեցե՛ք և ինձ
նալեք: Ահա՝ յես ձեզ մի բան ցուց կտամ... Յես... յես
յես...

Այստեղ պարծենկոտի լեզուն ասես կապն ընկափ:
Նապաստակը տեսավ իրեն նայող գալլին: Մյուսները
չտեսան, բայց նա տեսավ և չհամարձակվեց շունչ քաշել:
Հետո բոլորովին արտասովոր մի դեպք պատահեց:
Պարծենկոտ նապաստակը գնդակի պես վերև ցատկեց և
յերկուողից ընկալ ուղղակի գալլի լայն ճակատին ու գը-
լուխկոնձի տալով՝ գլորվեց նրա մեջքի վրայով, հետո
մի անդամ ել շուռ յեկալ ողի մեջ, և ապա այնպես պուկ
յեկալ, վոր թվաց, թե պատրաստ եր դուրս պլծնել իր
սեփական կաշուց:

Յերկա՛ր վագեց դժբախտ փոքրիկ նապաստակը, վա-
զեց, այնքան, մինչև վոր բոլորովին ուժասպառ լեղավ:

Նրան շարունակ թվում եր, վոր գալլը կրնկակոխ
ընկել ե իր հետեւից և վորտեղ վոր ե՝ կըոնի ատամնե-
ռով:

Վերջապես խեղճը բոլորովին ուժասպառ լեղավ, աչ-
քերը փակեց և մեռածի պես փուլեց թվի տակ:

Իսկ այդ ժամանակ գալլը դեպի ուրիշ կողմ եր վա-
զում: Յերբ նապաստակն ընկալ գալլի վրա, նրան թվաց,
թե ինչ վոր մեկը կըակեց իր վրա:

Յեկ գալլը փախավ: Անտառում ինչքան ասես նա-
պաստակ կարելի յե գտնել, բայց սա կատաղածի մեկն եր:

Մնացած նապաստակները յերկար ժամանակ չելին
կարողանում ուշքի գալ: Վո՛րը փախավ դեպի թփուտնե-
րը, վո՛րը թագնվեց կոճղի հետեւում, վո՛րը ծածկվեց փո-
սիկի մեջ:

Վերջապես բոլորն ել ձանձրացան թագնվելուց, և
նրանցից քաջերը կամաց-կամաց սկսեցին գլուխները
դուրս հանել ու նալել:

— Բայց գալլին ճարպկորեն վախեցրեց մեր նա-
պաստակը, — վորոշեցին բոլորը, — յեթե նա չլիներ,
մենք կենդանի չելինք պլծնի... Հապա ուր ե նա, մեր
անվախ նապաստակ...

Յեկ սկսեցին փնտուել: Ման յեկան, ման յեկան-վո՛չ
մի տեղ չկար քաջ նապաստակը: Արդյոք նրան մի ուրիշ
գալլ չկերպավ: Վերջապես մի կերպ գտանք: Նա պառկած
եր փոսում, թփի տակ և յերկուողից հազիվ շնչում եր:


— Ապրե՛ս, Շլդիկ, — գոչեցին բոլոր նապաստակ-
ները միաբերան: Համա Շլդիկն ես, հա... Դու քո ճարպ-
կությամբ վախեցրիր ծեր գալլին: Շնորհակալութիւնն,
յեղբայր: Իսկ մենք կարծում ելինք, վոր դու պարծենում ես:

Կարիճ նապաստակը մի անգամից քաջալերվեց: Դուրս
յեկավ իր փոսից, թափ տվեց իրեն, աչքերը կկոցեց և
ասաց:

— Հապա դուք ինչպես ելիք կարծում: Ախ, դուք,
վախկոտնե՛ր...

Այդ որվանից քաջ նապաստակն ինքն ել սկսեց հա-
գատալ, վոր նա իսկապես վոչ վոքից չի վախենում:





ՀԵՔԱԹ

ՅԵՐԿԱՐ-ՔԻԹ ՄՈԾԱԿ ՄՈԾԱԿԻՒ ՑԵՎ ԿԱՐՃ-ՊՈՉ ԲՐԴՈՏ ՄԻՇԿԱՅԻ ՄԱՍԻՆ

1.

Այս գեղքը պատահեց ուղիղ կեսորին, լեռը բոլոր մոծակները շոգից թափնվել ելին ճահիճում։ Յերկար-Քիթ Մոծակ Մոծակին կուչ լեկավ լախ տերեփ տակ և քնեց։ Քնած տեղը մի հուսահատական ձիչ լսեց նա.

— Ո՞ւ, ամա՞ն... հա՛ր, հավա՛ր...

Մոծակ Մոծակին դուրս թռավ թփի տակից և նույնական գոռաց.

— Ի՞նչ ե պատահել։ Ի՞նչու լեք բղավում։

Իսկ մոծակները թռչում ելին, բզզում, ճչում. վուշինչ չեր կարելի հասկանալ։

— Ո՞ւ, ապի... Արջը լեկել ե մեր ճահիճը, փովել ե ու քնել։ Խոտի վրա քնելուն պես՝ նա խկունեթ հինգհարյուր մոծակ խեղդեց. հենց վոր շունչ քաշեց՝ կու տվեց ամբողջ հարյուր հատ։

— Ա՛յս, այս ի՞նչ փորձանք ե, լեղալըներ։ Մենք մեր վոտքերը հազիվ ազատեցինք նրանից, թե չե բոլորին ել կճխլեր...

Յերկար-Քիթ Մոծակ Մոծակին միանգամից բարկացավ. նա բարկացավ նաև արջի ու հիմար մոծակների վրա, վորոնք անմտորեն ծղբտում ելին։

— Ե՛ս դուք, գաղարեցեք ծղբտալուց, — գոչեց նա, — իսս հիմա կգնամ և շատ հեշտ դուրս կքշեմ արջին... իսկ դուք իզո՞ւր տեղն եք միայն բղավում...

Մոծակ Մոծակին ե՛լ ավելի ուժգին բարկացավ և թռավ-գնաց։ Իսկապես արջը պառկած եր ճահիճում։ Նա մտել եր խոտի ամենախիտ տեղը, վորտեղ մոծակներն ելին ապրում, փովել եր և խոռացնում եր քթով, միայն նրա սուլոցն եր գալիս, կարծես մեկը փող եր նվազում։ Ա՛յ քեզ անխիղճ արարած։ Խցկվել ե ուրիշի տունը, իւզուր տեղը վոչնչացրել ե այդքան մոծակ և դեռ այնպես քաղցր ել քնած ե։

— Ե՛յ, քեռի՛, եդ մուր ես խցկվել դու, — անտառով մեկ գոռաց Մոծակ Մոծակին, և այն ել այնպես բարձր, վոր ինքն ել սարսափեց։

Բրդուտ Միշան մի աչքը բաց արեց. վո՛չ վոք չեր յերկում, մյուս աչքն ել բաց արեց. այս անգամ հազիվ նկատեց, վոր Մոծակը թռչում ե հենց իր քթի վրա։

— Ի՞նչ ես ուզում, բարեկամ, — փնթինթաց Միշան և նույնական մկնեց բարկանալ։ Ա՛յ թե ինչ, հենց նոր պառկեցի հանգստանալու, իսկ եստեղ ինչվոր անպիտանի մեկը ծղբտում ե...

— Ե՛յ, քեռի՛, հեռացիր գնա՛, քանի գլուխդ սաղե։

Միշան յերկու աչքն ել բաց արեց, նայեց են անպատկառին, փչեց քթով և խիստ բարկացավ։

— Վերջապես ի՞նչ ես ուզում դու, անպիտան արարած, — գոռաց նա։

— Հեռացի՛ր մեր սահմաններից, թե չե յես հանաք անել չեմ սիրում... Քեզ մուշտակիդ հետ միասին կուտեմ։

Այս՝ արդեն ծիծաղելի յեր արջի համար: Նա շուռ
յեկավ մյուս կողքին, դունչը թաթով ծածկեց և իսկուցն
յեվեթ խռոացրեց:

2.

Մոծակ Մոծակին վերադարձավ իրենց մոծակների
մոտ և պարձանքով աղմկում եր ճահիճով մեկ.

— Յես շատ վարպետորեն վախեցրի բրդոտ Միշկա-
լին... Ուրիշ անդամ նա ել չի գա:

Մոծակները զարմացան և հարցրին.

— Ե, իսկ հիմա վորտե՞ղ ե արջը:

— Յես չգիտեմ, յեղբայրներ: Նա սաստիկ վախե-
ցավ, յերբ յես ասացի, թե կուտեմ իրեն, յեթե չգնա՞
զե՞ վոր յես հանաք անել չեմ սիրում, դրա համար ել
ուղղակի ասացի. «Կուտե՛մ»: Վախենում եմ, վոր նա յեր-
կուղից սատկի շուտով: Ի՞նչ արած, ի՞նքն ե մեղավոր:

Բոլոր մոծակները ծղրտացին, բզզացրին և յերկար
ժամանակ վիճում ելին, թե վ՞ո՞նց վարվեն նրանք կո-
պիտ արջի հետ: Ճահիճում դեռ յերբեք այդպիսի սարսա-
փելի աղմուկ չեր բարձրացել: Նրանք ճացին, ծղրտա-
ցին և վորոշեցին դուրս քշել արջին ճահիճից:

— Թող գնա իր տունը, անտառը՝ և թող այնտեղ
ել քնի: Իսկ ճահիճը մերն ե... Մեր հայրերն ու պապե-
րըն ել են հենց այս ճահիճում ապրել:

Մի ծեր մոծակուհի խորհուրդ տվեց հանգիստ թող-
նել արջին. Թող պառկի իր համար, իսկ յերբ քունն առ-
նի, ինքը կդնա: Բայց բոլորն ել այնպես հարձակվեցին
նրա վրա, վոր խեղճը հազիվ կարողացավ թագնվել:

— Գնա՞նք, յեղբայրներ,— ամենից շատ գոռում եր
Մոծակ Մոծակին: Մենք նրան ցուց կտանք... Այս:

Մոծակները թուան Մոծակ Մոծակիի հետեից: Նը-
րանք թոշում ու ծղրտում ելին այնպես, վոր իրենք ել ե-
լին սարսափում: Թուան, յեկան, և ի՞նչ տեսնեն, արջը
պառկել ե և չի շարժվում:



— Յես ալգպես ել ասացի, վոր խեղճը մեռել ե յեր-
կլյուղից, — պարծենում եր Մոճակ Մոճակին: Բայց ափ-
սո՞ս, ափսո՞ս, տեսեք թե վորքան մեծ արջ ե...

— Այս, յեղբայրներ, նա քնած ե, յերկար ծոր տա-
լով ճշաց մի փոքրիկ մոծակ, վորը մոտենալով հենց ար-
ջի քթին՝ հազիվ հազ ազատվեց նրա քթածակերով ներս
քաշվելուց:

— Այս, դու, անամո՛թ: Այս, դու անխի՛ղճ, — միան-
դամից ծղրատացին բոլոր մոծակները և սարսափելի աղ-
մուկ բարձրացըրին: Հինգ հարյուր մոծակ ե խեղդել, հա-
րյուր մոծակ կուլ տվել և ինքն ել այնպես ե շնթռել,
կարծես թե վոչ մի բանից տեղյակ չի...

Իսկ Միշան քնած եր իր համար և քթով շվաշնում
եր:

— Նա ձևացնում ե, վոր քնած ե, — դոռաց Մոճակ
Մոճակին և հարձակվեց արջի վրա: Յես հիմա նրան
ցուց կտամ... Ա՛յ քեռի, հերի՛ք ե քնած ձևացնես քեզ:

Մոճակ Մոճակին հենց վոր թռավ ու իր յերկար քթով
ուղղակի արջի սև քիթը ծակեց՝ Միշան վեր թռավ: Թա-
թով խփեց նրա քթին, բայց Մոճակ Մոճակին, կարծես
թե բանի տեղ չդրեց այդ:

— Ի՞նչ ե, քեռի, դուր չեկա՞վ քեզ, — ծղրատաց Մոճակ
Մոճակին: Հեռացի՛ր, թե չե ավելի վաս կլինի... Յես՝ Յեր-
կար Քիթ Մոճակ Մոճակին՝ հիմա մենակ չեմ. ինձ հետ
միասին թռել յեկել են այստեղ նաև ավելի յերկար Քիթ,
Մեծ Մոճակ պապն ու յեղբայր Յերկար-Քիթիկ փոքր մո-
ժակը: Հեռացի՛ր, քեռի...

— Բայց յես չե՛մ հեռանա, — դոռաց արջը, նստե-
լով յետիկ թաթերի վրա, — յես ձեզ բոլորիդ կճիւեմ...

— Ե՛յ, քեռի՛, զո՞ւր ես պարծենում...

Մոճակ Մոճակին նորից թռավ ե ուղղակի մեխվեց
արջի աչքին: Արջը դոռաց ցավից, թաթով շրմփացըեց
իր դռւնչին, բայց վոչինչ չկար թաթի մեջ, և նա հազիվ

Եր աչքը չհանեց ճանկերով։ Իսկ Մոծակ Մոծակին պլուտօփում եր արջի հենց ականջի վրա և ծղբտում։
— Յես քեզ կուտեմ, քեռի՛...

3.

Միշան վերջնականապես զայրացավ։ Նա մի ամբողջ կեչի ծառ հանեց արմատով ու սկսեց դրանով ծեծել մոծակներին։ Յեվ վո՞նց եր ջարդում ամբողջ թափով... Ծեծե՛ց, ծեծե՛ց, նույնիսկ հոգնեց, բայց մի հատ սպանված մոծակ գտավ միայն։ Բոլորն ել պտավում ելին նրա դլխավերել և ծղբտում։ Այն ժամանակ Միշան մի ծանր քար վերցրեց և փորձեց խփել մոծակներին։ Դարձա՛ւ անոգուտ։

— Հը՛, հաղթեցի՞ր քեռի, — ճշաց Մոծակ Մոծակին։ Բայց և այնպես յես քեզ կուտե՛մ...

Յերկա՞ր կովեց Միշան մոծակների հետ թե քիչ, հայտնի չե, միայն թե մեծ աղմուկ և իրարանցում եր։ Արջի մոնչոցը լսվում եր հեռվից։ Յեվ քանի՞ ծառ արմատահան արեց նա, ինչքան քարեր շուռ տվեց... արջը շատ եր ուղում ամենից առաջ Մոծակ Մոծակիին բռնել։ Չե՞ վոր նա քիչ առաջ ահա ալստեղ, հենց նրա ականջի վրա յեր պտավում։ Նա թաթով նրան հարվածներ հասցրեց, բայց իզուր, և դարձալ վոչինչ չկար, միայն իր ամբողջ դունչն եր նա արյունլվա անում։

Վերջապես Միշան ուժասալառ յեղավ։ Նա նստեց հետեւի թաթերի վրա, վնչացրեց և մի նոր բան ուտածեց։ արի գլտորվեմ խոտի վրայով, վորպեսզի ճիշեմ ամբողջ մոծակլան թագավորությունը։ Միշան գլտորվեց, գլտորվեց՝ սակայն դրանիցելքան դուրս չեկավ, միայն թե ե՛լ ավելի շատ հոգնեց նա։ Այն ժամանակ արջն իր դունչը թագցրեց մամուռի մեջ, — այդ ավելի վատ յեղավ։ մոծակները նեխվեցին արջի պոչին։ Արջը վերջնականապես կատաղեց։

— Սպասեցե՛ք, հիմքի յես ձեզ ցուց կտամ, — այնպես մոնչաց նա, վոր հինգ վերստի վրա լսվեց նրա ձարչնը։ Յես ձեր գլխին մի այնպիսի խաղ խաղամ... Յես... յես... յես...

Մոծակները նահանջեցին և սպասում ելին, թե ի՞նչ կլինի։ Իսկ Միշան լարախաղացի պես մագլցեց ծառը, նստեց ամենահաստ ճյուղի վրա ու մոնչաց։

— Հապա մոտեցեք դուք ինձ... Բոլորիդ քի՛թն ել կջարդեմ։

Մոծակները ծիծաղեցին սուր ձախով և իրենց ամբողջ գորքով հարձակվեցին արջի վրա։ Սկսվեց ծղբտոցը, աղմուկ, իրարանցում։ Միշան կովեց, կովեց, մոծակների գորքից հարյուր հատ հանկարծակի կուլ տվեց, հազաց, մեկ ել վոր չպոկվեց ճյուղից, վայր ընկավ վոնց վոր տոպղակ... Հետո վեր կացավ, քորեց ջարդված կողքը և ասաց։

— Հը, ի՞նչ ե, հաղթեցի՞ք։ Տեսմք թե վորքան ճարպիկ եմ թուզում յես ծառից։

Մոծակներն ավելի սուր քըքջացին, իսկ Մոծակ Մոծակին հո աղմկում ե փող փչողի պես։

— Յես քեզ կուտեմ... յես քեզ կուտեմ... կուտե՛մ... կուտե՛մ։

Արջը բոլորովին հոգնեց, ուժասալառ յեղավ, բայց ամաչում եր հեռանալ ճահիճից։ Նա նստել եր հետևի թաթերի վրա, յեվ միայն աչքերն եր թարթում։

Այդ փորձանքից նրան աղատեց գորտը։ Նա դուրս թռավ մամուռապատ թմբի տակից, նստեց հետևի թաթիկների վրա և ասաց։


— Միխայլ իվանովիչ, զուր տեղն անհանդստացնում եք ձեզ. ուշադրություն մի՛ք դարձնի այդ անպիտան մոծակիկների վրա։ Զարժե՛։

— Իրոք վոր չարժե, — ուրախացած պատասխանեց արջը, — յես հենց այնպես... Հապա թող նրանք փորձեն իմ վորջը գալ, յես ենպե՛ս... յես...

Միշան լետ դարձավ և վոնց եր փախչում ճահիճից,
իսկ Յերկար-Քիթ Մոծակ Մոծակին թոշելով նրա հետե-
վից՝ գոռում եր.

— Ո՞յ, յեղբայրնե՛ր, բռնեցեք: Արջը փախչում ե,
բռնեցե՛ք:

Հավաքվեցին բոլոր մոծակները, խորհուրդ արին և
վորոշեցին. «Զարժե. թող գնա. չե վոր ճահիճը մեղ մը-
նաց»:



ՀԵՔՅԱԹ

ՃՆՃՈՒԿ ՃՆՃՈՒԿԻ, ՅՈՐՃ ՅՈՐՃՈՎԻՉԻ¹⁾ ՅԵՎ ԽՈՂՈՎԱԿ ՄԱՔՐՈՂ ՈՒՐԱԽ ՅԱՅԱՅԻ ՄԱՍԻՆ

1.

Ճնճղուկ ճնճղուկին և Յորշ Յորշովիչն ապրում ելին
վորպես շատ լավ բարեկամներ: Ամառն ամեն որ ճնճ-
ղուկ ճնճղուկին թոշում գալիս եր դետակի մոտ և գո-
ռում:

— Ե՛ս, յեղբայր, բարե՛: Վո՞նց ես:

— Վոչինչ, կամաց-կամաց ապրում ենք, ելի, — պա-
տասխանում եր Յորշ Յորշովիչը, — համեցեք հյուր ինձ
մոտ: Ինձ մոտ, յեղբայր, լավ ե խոր տեղերում: Զուրը
կանգնած է հանդարտ, ինչքան ուզես ջրալին կանաչ խոտ
կա: Քեզ կհուրասիրեմ գորտի ձկնկիթով, վորդերով, ջրա-
լին միջատներով...

— Շնորհակալ եմ, յեղբայր: Ուրախությամբ կգալի

1) Յորշ Յորշովիչը ձուկ եւ Ծ. Թ.

Քեզ մոտ հյուր, բայց վախենում եմ ջրից։ Ավելի լավ ե դու թոշես և հյուր գաս ինձ մոտ՝ կտուրի վրա... Յես քեզ, լեղալը, պառողներով կհյուրասիրեմ. յես մի ամ-բողջ այգի ունեմ, հետո մի կտոր չոր հաց ել կճարենք վարակ ել, շաքար ել, կենդանի մոծակ ել։ Զե՞ վոր դու սիրում ես շաքար։

— Եղ ի՞նչ տեսակ բան ե շաքարը։

— Սպիտակ ե։

— Ինչպես վոր մեր գետի կոպիճները։

— Այո, հենց ալդպես։ Բայց լերը բերանդ ես դը-նում-քաղցը ե։ Քո կոպիճն ուտելու բան չե։ Թոչենք իս-կուն կտուրի վրա։

— Վո՞չ յես չեմ կարողանում թոչել. մեկ ել յես խեղվում եմ ողում։ Այ, ավելի լավ ե միասին լողանք ջրի մեջ։ Յես քեզ ամեն ի՞նչ ցուց կտամ...»

Ճնճղուկ ճնճղուկին փորձեց ջուրը մտնել — մտավ մինչև ծունկը, բայց դրանից դենը սարսափելի լեր ար-դեն։ Ալդպես կարելի լեր խեղվել...»

Ճնճղուկ ճնճղուկին խմուն եր գետի հստակ ջուրը, իսկ շոգ որերին լողանում մի վորևե ծանծաղ տեղում, մաքրում փետուրները, և նորից կտուրն եր թոչում։

Ընդհանրապես նրանք հաշտ իլին ապրում և սիրում ելին զրուցել զանազան բաների մասին։

— Եղ վ՞նաց ե, վոր դու չես ձանձրանում ալդպես լերկար մնալ ջրում, — հաճախ զարմանքով ասում եր ճնճղուկ ճնճղուկին։ Այնտեղ թաց ե և խոնավ, կարող ես մրսել...»

Յորշ Յորշովիչն ել իր հերթին եր զարմանում.

— Յեղբայր, դու վ՞նաց չես ձանձրանում թոչելուց։ Այ, անքան շոգ ե լինում աելի տակ, վոր իսկույն կարող ես խեղվել ինձ մոտ միշտ զով ե։ Լող տուր քեզ հա-մար ինչքան ուզում ես։ Հապա ինչպես ե, վոր ամառը ինձ մոտ բոլորն ել ջուրն են թափվում լողանալու հա-մար... Իսկ հիվ կզա քեզ մոտ, կտուրի վրա։

— Յեվ այն ել վ՞նաց են գալիս, լեղբայր... Յես մի շատ լավ բարեկամ ունեմ, խողովակ մաքրող Յաշան։ Նա միշտ հյուր ե գալիս ինձ մոտ։ Յեվ այնքան ուրախ խո-ղովակ մաքրող ե, շարունակ լերգում ե։ Մաքրում ե խո-ղովակներն ու հետան ել լերգում։ Նա նստում ե հենց կր-տուրի ծալրին, հանգստանում, հաց ե հանում, ուտում, իսկ նրա փշրանքներն ել յես եմ հավաքում։ Շաա սիրով ենք ապրում։ Զե՞ վոր յես ել եմ սիրում զվարճանալ։

Այդ բարեկամների մոտ անախորժություններն ել, համարյա միատեսակ ելին։ Որինակ, ձմեռ ե։ Վ՞նաց եր սառչում խեղճ ձնձղուկ ձնձղուկին։ Վայ, ինչպիսի ցուրտ որեր ելին լինում։ Այդ ժամանակ ձնձղուկ ձնձղուկին ցուրտ եր փետուրները, վոտները դնում եր տակն ու նստում։ Յեվ մի փրկություն կար միայն — խցկվել մի վորե-վե տեղ, խողովակի մեջ և մի քիչ տաքանալ։ Բայց թե այնտեղ ել փոճանք կար։

Ճնճղուկ ճնճղուկին մի անդամ քիչ մնաց վոչնչա-նար շնորհիվ իր ամենալավ բարեկամ՝ խողովակ մաքրո-ղի։ Խողովակ մաքրողը լեկավ, լերը նա բաց թողեց չու-գունե կշռաքարը վառարանի ավելի հետ խողովակի մեջ՝ քիչ մնաց ճնճղուկ ճնճղուկի գլուխը ջարդեր։ Նա դուրս պրծակ խողովակից ամբողջապես մրի մեջ կորած, խողո-վակ մաքրողից ել վատթար վիճակով և սկսեց դժգոհել։

— Յաշա, Եղ ի՞նչ ես անում դու։ Զե՞ վոր ալդպե-սով կարելի լե մարդ սպանել...»

— Իսկ յես վո՞րտեղից իմանամ, թե դու նստած ես խողովակի մեջ։ Սրանից հետո մի քիչ ավելի զգուշ՝ լե-ղիր... Յեթե յես չուգունե կշռաքարով գլխիդ խփելի, լմակ կլիներ։

Յորշ Յորշովիչի կլանքն ել ձմեռ հաճելի չեր։ Այդ յեղանակին նա ավելի խորն եր մտնում մի վորևե տեղ գետնափոսում և ամբողջ որերով ննջում եր։ Այնտեղ թե մութ եր, և թե՛ ցուրտ, բայց անդամ ել չեր ուզում տե-ղից շարժվել։ Յերբմ մաքրություն գործակուտի մեջ, այն

ժամանակ նրան կանչում եր ձնձղուկ ձնձղուկին։ Նա թռչում գալիս եր ծակուտի մոտ ջուր խմելու և կանչում եր։

— Ե՞ս, Յորշ Յորշովիչ, արդյոք դու կենդանի յես։

— Կենդանի՝ յեմ... — քնաթաթախ ձայնով պատասխանում եր Յորշ Յորշովիչը, — միայն թե շարունակ ուզում եմ քնել։ Ընդհանրապես շատ վատ ե։ Մեզ մոտ բոլորն ել քնած են։


— Մեզ մոտ ել լավ չե, յեղբայր։ Ի՞նչ արած, պետք ե համբերել... ախ, ինչպիսի չար քամի յե փչում։ Այստեղ, յեղբայր, չես կարող քնել... Յես շարունակ մի վոտի վրա յեմ դես ու դեն թռչկոտում, վորպեսզի տաքանամ։ Իսկ մարդիկ նայում են ու ասում. «Տեսեք, թե վորքան ուրախ ճնձղուկ ե»։ Ա՛խ, յերբ պիտի տաքությունն ընկնի։ Յեղբայր, դու արդեն նորից քնեցիր։

Բայց ամառն ել իր տեսակի անախորժություններն ուներ։ Մի անդամ բազեն յերկու վերստ հալածեց ձընճղուկ ձնձղուկին, և նա հազիվ հաղ թագնվեց դետի ճահճուտում։

— Ո՞ի, հազիվ կենդանի պրծա, — գանդատվում եր նա Յորշ Յորշովիչն՝ մի կերպ շունչը պահելով։ — Համա ավագակն ե, հա։ Քիչ եր մնացել, վոր ճանկի, իսկ դրանից հետո՝ արդեն կորած ելի։

— Այդ մեր գալաձուգի նման ե, — միխթարում եր Յորշ Յորշովիչը։ Յես ել, ես մոտ որերս, քիչ եր մնացել ընկնելի նրա ճանկը։ Այնպես ընկալ իմ հետեկց, վոնց վոր կայծակ։ Իսկ յես դուրս լողացի մլուս ձկնիկների հետ միասին և մտածում ելի, թե եղ ի՞նչ ծղան ե ընկած ջրում, բայց հենց վոր այդ ծղանն ընկալ իմ հետեկց... Յեվ ինչո՞ւ համար են ապրում այդ գալլածիկները։ Զարմանում եմ ու չեմ կարողանում հասկանալ...»

— Յես ել նույնպես... Գիտե՞ս ինչ, ինձ թվում ե, վոր բազեն մի ժամանակ գալլածուկ ե յեղել, իսկ գալլածուկը՝ բազե։ Մի խոսքով յերկուսն ել ավագակներ են։



2.

Այս, այսպես ելին ապրում ու կանք վայելում ձնձղուկ ձնձղուկին և Յորշ Յորշովիչը. ձմեռը նրանք մրսում ենին, ամառն ուրախանում: Իսկ ծխնելուզ մաքրող ուրախ Յաշան իր խողովակներն եր մաքրում և լերգում: Ամեն ձեկն իր գործը, իր ուրախություններն ու իր վշտերն ուներ:

Մի անգամ, ամառը, խողովակ մաքրողը վերջացրեց իր աշխատանքը և դնաց գետափը՝ լվացվելու: Գնում եր նա ու շվացնում, լերը հանկարծ մի սարսափելի աղմուկ լսեց հենց ալդտեղ: Ի՞նչ եր պատահել: Իսկ գետի վրա բադերը, սագերը, ծիծենակները, կտցարները, ագռավներն ու աղավնիները՝ պտտվում ելին արագ: Նրանք բոլորն ել այնպես աղմկում, գոռում, քրքջում ելին, վոր բան չեր հասկացվում:

— Ե՞ս, ձեզ հետ եմ, ի՞նչ ե պատահել — գոռաց խողովակ մաքրողը:

— Ահա թե ի՞նչ ե պատահել... ծլվաց ճարպիկ լերաշտահավը: — Այնքան ե ծիծաղաշարժ, այնքան ե ծիծաղաշարժ... Նախիր և տես, թե ի՞նչ ե անում մեր ձընձղուկ ձնձղուկին... բոլորովին կատաղել ե:

Յերաշտահավը ծիծաղեց բարալիկ ձայնով, պոչը պտտացրեց և ճախրեց գետի վրայով: Յերբ խողովակ մաքրողը մոտեցավ գետին ձնձղուկ ձնձղուկին իսկույն հարձակվեց նրա վրա: Իսկ ինքն այնպես սարսափելի յեր. կտուցը բաց, աչքերն ալրվում ելին, բոլոր փետուրները կանգնած ցից-ցից:

— Ե՞ս, ձնձղուկ ձնձղուկի, եղ ի՞նչ աղմուկ ես հանում դու ալստեղ, լեղբար, — հարցրեց խողովակ մաքրողը:

— Վոչ, յես նրան ցուց կտամ, — բղավում եր ձնձղուկ ձնձղուկին, կատաղությունից խեղդվելով, — նա դեռ

չգիտի, թե ո՞վ եմ յես: Յես ցուց կտամ արդ անիծված Յորշ Յորշովիչին: Նա, արդ ավաղակը, ինձ չի՛ մոռանա...

— Ականչ մի՛ կախի դրան, — կանչեց ջրի միջից Յորշ Յորշովիչը, — նա ամբողջապես ստում եւ:

— Յե՞ս եմ ստում, — բղավեց ձնձուկ ձնձուկին, — հապա սիվ ճիճու գտավ... Յե՞ս եմ ստում: Այնպես գեր ճիճու յեր: Յես գետափում հողը փորփրեցի և դուրս հանեցի նրան... Ինչքան աշխատեցի վերջապես... բանեցի և բերի տուն—իմ բունը: Յես ընտանիքի տեր մարդ եմ—պետք ե կերակուր բերել... դեռ նոր ելի թուել ճիճուկի հետ գետի վրա, յերբ անիծված Յորշ Յորշովիչը, ա՛յ մի նրան գալլածուկը կուլ տար, գոռաց. «Բազե՞ն»: Յես յերկուողից ճշացի, ճիճուն ջուրն ընկապ, իսկ Յորշ Յորշովիչը նրան կուլ տվեց... Սա նշանակում ե ստել: Յեզ վոչ ո՞ի բազե ել չկար:

— Են, ի՞նչ անենք, յես հանաք արի, — արդարացակ Յորշ Յորշովիչը, — բայց ճիճուն իսկապես վոր համեղ եր:

Յորշ Յորշովիչի մոտ հավաքվեցին ամեն տեսակ ձըկներ՝ կարմրակ, ծածան, պերկես, ոձիճանառ, վորոնք լսելով դեպքի մասին, ծիծաղեցին: Այո, ճարակորեն և հանաքել Յորշ Յորշովիչն իր հին բարեկամի հետ: Բայց ամենից ծիծաղաշարժն այն ե, թե ինչպես եր կովի բըռնըվել նրա հետ ձնձուկ ձնձուկին: Նա շարունակ հարձակվել ե, բայց վոչինչ չի կարողացել յետ իսլել:

— Խեղգեկ դու իմ ճիճվով, — նախատում եր ձընձուկ ձնձուկին, — յես ինձ համար մեկ ուրիշը կճարեմ: Սակայն վիրավորականն այն ե, վոր Յորշ Յորշովիչը խաբեց ինձ և դեռ ինձ վրա ել ծիծաղում ե: Բա յես եղ տեսակ մարդուն դեռ հրավիրում ելի ինձ մոտ կտուրի վրա հլուր... լավ բարեկամ ես, ի՞նչ եմ ասել: Հիմի խողովակ մաքրող Յաշան ել կամի... Մենք իրար հետ նույնալես հաշտ ենք ապրում, և մինչեւ անգամ յերեմն միասին

նախաճաշում: Նա ուտում ե, իսկ յես նրա թափած փըշը բանքն եմ հավաքում:

— Սպասեցե՛ք, յեղբայրներ, այս գործը պետք է քննել, — հայտարարեց խողովակ մաքրողը, — միայն թողեք, վոր առաջ յես լվացվեմ... Յես խղճով կքննեմ ձեր գործը: Իսկ դու, ձնձուկ ձնձուկի, առայժմ մի քիչ հանգստացիր...

— Իմը իրավացի գործ ե, յես ինչո՞ւ պիտի անհանգըստանամ, — բղավեց ձնձուկը, — բայց յես ցուց կըտամ Յորշ Յորշովիչին, թե ի՞նչ ե նշանակում ինձ հետ հանաք անել...

Խողովակ մաքրողը նստեց ափին, փոքրիկ կապոցը ճաշի հետ միասին դրեց իր կողքի քարին, ձեռքերն ու յերեսը լվաց և ասաց.

— Դե՛, յեղբայրներ, հիմա պիտի դատենք... Դու, Յորշ Յորշովիչ, ձուկ ես, իսկ դու, ձնձուկ ձնձուկի, թոշուն ես: Այդպե՞ս ե, թե վոչ:

— Այդպե՞ս ե, այդպե՞ս, — կանչեցին բոլոր թոշուներն ու ձկները:

— Շարունակում ենք: Զուկը պիտի ապրի ջրում, իսկ թոշունը—ողում: Այդպես ե: Լավ... Իսկ ճիճուն, որինակ, ապրում ե հողի մեջ: Այդ ել լավ: Դե հիմա տեսեք...

Խողովակ մաքրողը բաց արեց իր կապոցը, մի հաճարի հաց դրեց քարի վրա և ասաց.

— Ահա, տեսեք, ի՞նչ ե այս: Տես եմ դաղել այն, և յես ել կուտեմ, ու դեռ վրեն ել ջուր կխմեմ: Ձնձուկ ձնձուկին ճիճու յե ճարել, նշանակում ե նա լե այն վաստակել. նշանակում ե ճիճուն նրանն ե...

— Թուլլ տվեք, քեռի... — լսվեց մի բարակիկ ձայն՝ թոշուների ժխորից:

Թոշունները ճանապարհ տվին և թողին, վոր առաջ դա յերաշտահավը, սա իր նուրբ տոտիկներով մոտեցավ խողովակ մաքրողին:

— Քեռի, դա ճշմարիտ չե՛,

— Ի՞նչը ճշմարիտ չե:

— ԶԵ՞ վոր յես եմ գտել ճիճուն... Այ, բադերին հարցըք, նրանք են տեսել: Յես եմ գտել այն, իսկ ձընձուկը հարձակվեց ու գողացավ:

Խողովակ մաքրուը վրդովվեց: Բոլորովին ուրիշ բան դուրս յեկավ:

— Ի՞նչպէ՞ս թե, — մըթմթաց նա, ուժերը հավաքելով, — Ե՞ս, ձնձուկ ձնձուկի, եղ ի՞նչ ե, ու իսկապէ՞ս խարում ես:

— Յես չե՛մ խարում, այլ՝ յերաշտահավը: Նա խոսքը մեկ ե արել բադերի հետ...

— Կարծես ճիշտը չես ասում, յեղբայր... հը՛մ... լավ: Իհարկե ճիճուն դատարկ բան ե, բայց թե զողանա՛լն ե վատ: Ալդպէ՞ս ե թե վոչ:

— Ճիշտ ե, ճիշտ ե, — խմբով ճղղացին նորից բուրը, — բայց և այնպես ու դատիր Յորշ Յորշովիչին ու ձնձուկ ձնձուկիին, թե նրանցից վո՛րն ե արդարը:

Յերկուսն ել աղմկեցին, յերկուսն ել կռվեցին և բուրին ել վոտի կանգնեցրին:

— Ո՞վ ե արդարը: Այս, դուք, Յորշ Յորշովիչ և ձընձուկ ձնձուկի, կռվարարնե՛ր եք: Ճիշտ եմ ասում, վոր կռվարարներ եք: Յես հենց ձեզ, յերկուսի՛դ ել կապտժեմ, վորպես որինակ: Դե՛, իսկուն հաշտվեցեք:

— Ճշմարիտ ե, — խմբով ճշացին բուրը, — թնդհաշտվեն:

— Իսկ յերաշտահավին, վորն աշխատանք ե թափել ճիճուն ճարելիս, յես կկերակրեմ փշրանքներով, — վորոշեց խողովակ մաքրողը: Բոլորն ել վոհ կիխնեն:

— Հրաշալի յե, — նորից ճշացին բուրը:

Բայց յերբ խողովակ մաքրողը ձեռքը մեկնեց, հացն արդեն չկար: Մինչդեռ նա դատ եր տեսնում, ձնձուկ ձնձուկին հացը փախցրել եր արդեն:

— Ա՛յս, ավաղակ, անս, խարդախ, — վրդովվեցին բոլոր ձկներն ու բոլոր թոշունները:


Յեվ բոլորն ընկան գողի հետեկից: Հացի կտորը ծանր էր, իսկ ձնձուկ ձնձուկին նրա հետ միասին հեռու թոշել չեր կարող: Նրան հասան հենց գետի մոտ: Փոքր ու մեծ թոշունները հարձակվեցին գողի վրա: Մի կատարլալ իրարանցում սկսվեց: Բոլորն ել մի գլուխ հապոկեցին, միայն փշրանքներն ելին թոշում գետի մեջ, և հետո արդեն հացի կտորն ել թուավ և գետն ընկավ: Զկների և թոշունների միջև իսկական կորիվ սկսվեց: Հացի ամբողջ կտորը մանր փշրանքներ դարձրին և կերան. այս վոչինչ չմնաց: Յերբ հացի կտորը կերան պըծան, բոլորն ել ուշքի յեկան, և բոլորն ել ամաչեցին: Ապա ընկան գող ձնձուկի հետեկից և հենց ճանապարհին ել գողացած կտորը կերան: Իսկ խողովակ մաքրող ուրախ Յաշան նստել եր ափին, նայում եր ու ծիծաղում: Սակայն շատ ծիծաղարժ գուրս յեկավ ամեն ինչ: Բոլորն ել փախան նրանից, մենակ յերաշտահավը մնաց:

— Իսկ դու ինչու չես թոշում նրանց հետեկից, — հարցըրեց խողովակ մաքրողը:

— Յես ել կթոչեցի, քեռի ջան, բայց փոքրահասակ եմ: Մեծ թոշուններն ինձ տեղն ու տեղը կքրքրեն...

Ալպնուշկան յեկավ ափը, սկսեց հարցնել խողովակ մաքրող ուրախ Յաշային, թե ի՞նչ ե պատահել, և նույնպես ծիծաղեց:

— Այս, վորքան նիհար են նրանք բոլորն ել, թե՛ ձկնիկները և թե՛ թոշնակները: Իսկ յես ամբողջը կբաժանեցի և ճիճուն, և հացի կտորը, ու վոչ վոք ել չեր կուվի: Մի քանի որ առաջ՝ յես չորս խնձոր բաժանեցի: Հացը չորս հատ խնձոր բերեց և ասաց. «Բաժանի՛ր հավասար իմ և լիզակի միջև»: Յես ել յերեք մասի բաժանեցի. մի խնձոր տվի հալըիկիս, մյուսը՝ լիզային, իսկ յերկուսը վերցը ինձ:



ՀԵՔՅԱԹ

ՍԵՎԱԳԼՈՒԽ-ԱԳՌԱՎԻԿԻ ՅԵՎ ԴԵՂԻՆ ԹՌՉՈՒԽ ԴԵՂՋԱՆԻԿԻ ՄԱՍԻՆ

1.

Ագուավը նստել եր կեչի ծառին և իր կտուցով խը-
փում եր ճյուղին. թը՝ խկ-թը՝ խկ։ Նա կտուցը մաքրեց,
չորս կողմը նալեց և սկսեց դրույլ.

— Դը՛ռ... դը՛ռ...

Յանկապատի վրա ննջող Վասկան (կատուն) յերկու-
դից քիչ եր մնացել ցած ընկներ և սկսեց փնթփնթալ.

— Վա՛յ կործանվես դու, սեազլուխ։ Աստվածն ել
քեզ ենպես կոկորդ ե տվել վո՞ր։ Ինչի՞ վրա յես ուրա-
խացել։

— Հեռացիր։ Յես ժամանակ չունեմ. միթե չես տես-
նում։ Ախ, բոլորովին ժամանակ չունեմ։ Դը՛ռ, դը՛ռ,
դը՛ռ... Յեվ շարունակ դործ, հա՛ դործ։

— Հոգնել ես, խե՛զմ, — ծիծաղեց Վասկան։

— Լոխի՞ր, ծո՛ւլլ։ Ենքան պառկել ես, վոր ամբողջ
կողքերդ տրորել, ջարդել ես, դու արեի տակ տաքանալ

դիտես միայն, իսկ յես արդեն առավոտվանից դադար
չունեմ։ Տասը կտուրի վրա յեմ նստել, քաղաքի կեսը թը-
ռել, ման եմ յեկել, ամեն անկյուն նալել։ Բայց դեռ
պետք ե զանգակատուն թոշեմ, շուկա գնամ, բանջարա-
նոցները փորփորեմ... Այս՝ ինչ եմ քեզ հետ իզուր տեղը
ժամանակ կորցնում, քանի վոր ժամանակ չունեմ։ Ախը
են ել վոնց, իսկի՛ ժամանակ չունեմ։

Ագուավը վերջին անգամ կտուցով խփեց ճյուղին,
վեր թռավ տեղից և ուզում եր թոշել, յերբ մի սարսա-
փելի ճիչ լսեց։ Ճնճղուկների մի յերամ եր սլանում, իսկ
յերամի առջեկից՝ թոշում եր մի փոքրիկ և դեղնավուն
թոշնիկ։

— Յեղբայրնե՛ր, բոնեցե՛ք դրան... ո՛վ, բոնեցե՛ք,—
ճվճվում ելին ճնճղուկները։

— Ինչ ե պատահել, ուր, — կանչեց Ագուավը, ըսկ-
նելով ճնճղուկների հետեւից։

Ագուավը տասն անգամ թափահարեց թևերը և հա-
սավ ճնճղուկների յերամին։ Դեղնավուն թոշունը կորցրեց
իր վերջին ուժերը և ընկավ մի փոքրիկ պարտեզ, վոր-
տեղ յեղենու, հաղարջի և թխենու թփեր կալին։ Նա ու-
զում եր թագնվել իր հետեւից ընկած ճնճղուկներից։ Դեղ-
նավուն թոշունը խցկեց թփի տակ թե չե, Ագուավը
վրա հասավ։

— Դու ով ես, — դըռաց նա։

Ճնճղուկներն ել այնպես ելին շրջապատել թուփը,
կարծես թե մեկը մի բուռը սիսեռ եր ձգել։

Նրանք չարացել ելին դեղնավուն թոշնիկի վրա և
ուզում ելին քրքրել նրան։

— Դուք ինչու համար եք սրան նեղացնում, — հար-
ցրեց Ագուավը։

— Հապա նա ինչո՞ւ լեդեղին, — միանգամից ճվճա-
ցին բոլոր ճնճղուկները։

Ագուավը նալեց դեղնավուն թոշնիկին։ Իսկապես, նա
ամբողջապես դեղին եր։ Ագուավն իր գլուխը շարժեց և
տսաց։

— Ախ, դուք, չարաձմինե՞ր... Զե՞ վոր սա ամենեմին թոշուն ել չի: Միթե՞ թոշուններն ալսպես են լինում: Բայց, ասենք, ավելի լավ ե քաշվեք, հեռացեք: Այս պիտի խոսեմ այս հրաշքի հետ: Սա ձեանում ե միայն, վոր թոշուն ե:

Ճնճղուկները ճվացին, ճվճվացին, ավելի շատ չարացան, բայց թե վոշինչ չելին կարող անել — պետք եր հեռանալ: Աղուավի հետ խոսելը շատ կարճ տևեց. իր մեծ կտուցով այնպես կարող եր բռնել, վոր շունչդ կտրեր խոկուն:

Ճնճղուկներին քշելուց հետո, Աղուավն սկսեց հարց ու փորձ անել գեղին թոշնիկին, վորը ծանր շնչում և այնպես խղճակի յեր նայում իր սկ աշխիկներով:

— Ո՞վ ես դու, — ասաց Աղուավը:

— Յես Դեղձանիկ եմ:

— Տես, չխարես հա՛, թե չե վատ կլինի: Յեթե յես Ալինելի, ճնճղուկները կքրքրելին քեզ:

— Ճիշտ եմ ասում, վոր յես Դեղձանիկ եմ:

— Դու վնրտեղից ես լուս աշխարհ ընկել:

— Յես ապրում ելի վանդակում... վանդակում ել ճնվել եմ ու ապրել... Յես շարունակ ուղում ելի թըռչել, ինչպես մյուս թոշունները: Վանդակը դրված եր պատուհանում, և յես նայում ելի ուրիշ թոշուններին: Նրանք այնքան ուրախ ելին, իսկ վանդակում՝ այնչափ նեղ եր: Դե, Ալլոնուշկա անունով մի փոքրիկ աղջիկ մի բաժակ կաթ բերեց ջրի հետ, դռնակը բացեց, յես ել դուրս թռա: Սենյակի մեջ շատ դես ու դեն ընկա, հետո ել ողանցքով թռա-գնացի:


— Դու ինչ ելիր անում վանդակում:

— Յես լավ յերգում եմ...

— Հապա մի յերգիր, տեսնեմ:

Դեղձանիկը լերգեց: Աղուավը գլուխը կրծքին խոնարհեց և զարմացավ:

— Յեվ դու ալդ յե՞րգ ես անվանում, հա՛, հա՛, հա՛:



Ա՛յ թե համար են լեղել քո տերերը, վոր ալդպիսի լեր-
դի համար կերակրել են քեզ:

Յեթե վորեկցե մեկնն կարելի յե կերակրել, վորպես
իսկական թոշուն, ալդ լե՛ս եմ: Մի քիչ առաջ յես ան-
պես գոռացի, վոր խարդախ Վասկան մազ մնաց ցանկա-
լատից վայր ընկներ:

— Այ, ի՞նչ եմ ասել, լերդը դա յե, հա՛...

— Յես ճանաչում եմ Վասկային: Սարսափելի գա-
զան ե նա: Քանի՛ անգամ նա գողեգող մոտեցել ե մեր
վանդակին: Նրա աչքերը կանաչ են, տեղն ու տեղը
կրակ, ճանկերն ել սուր ու բաց...

— Եհ նայած մարդին, մեկի համար սարսափելի յեն,
մյուսի համար վոչ: Այդ ճիշտ ե, վոր նա շատ խարդախն
ե: Բայց թե դրա մասին հետո կխոսենք, իսկ յես դար-
ձալ չեմ հավատում, վոր դու իսկական թոշուն ես:

— Ճիշտ եմ ասում, մորաքույր, վոր յես թոշուն
եմ, միանգամայն թոշուն: Բոլոր դեղձանիկներն ել թու-
չուն են:

— Լա՛վ, լա՛վ, կտեսնենք... Բայց թե դու վո՞նց պե-
տի ապրես:

— Ինձ շատ քիչ բան ե հարկավոր, մի քանի հա-
տիկ, մի փոքրիկ կտոր շաքար, պաքսիմատ, և արդեն յես
կուշտ եմ:

— Տեսնո՞ւմ ես ինչպիսի խանում ե: Դե լավ, ան-
շաքար դեռ լոլա կդնաս, իսկ հատիկներ՝ մի կերպ կճա-
րես: Ընդհանրապես դու ինձ դուր ես գալիս: Ուզո՞ւմ ես
միասին ապրենք: Յես կեչի ծառի վրա հրաշալի բուն
ունեմ:

— Շնորհակա՛լ եմ: Միայն թե ճնճղուկները...

— Ինձ հետ վոր ապրես, վո՛չ վոք չի համարձակվի
մատով անգամ դիպչել քեզ: Վոչ միայն ճնճղուկները,
ալև խարդախ Վասկան գիտի իմ բնավորությունը: Յես
հանաք անել չեմ սիրում:

Ագուավն ու Դեղձանիկը սկսեցին միասին ապրել մի բնում: Ագուավը թեև յերբեմն սիրում եր փնթփնթալ, բաց չար թռչուն չեր: Նրա բնավորության զլխավոր պակասությունն այն եր, վոր նա բոլորին նախանձում եր, իսկ իրեն համարում եր անպատճաճ:

— Ե՞հ, ինչո՞վ են ինձնից լավ այդ հիմար հավերը: Բայց նրանց կերակրում, խնամում, պահպանում են, — գանգատվում եր նա Դեղձանիկին: Նմանապես և աղավնիները... Նրանցից ի՞նչ ոգուտ, բայց թե նրանց ել են մի բուռը վարսակ ձգում: Աղավնին նույնպես հիմար թռչուն ե... Յես հազիվ եմ մոտ թռչուն նրանց, յերբ նրանք բոլորն ել ինձ քշում են իսկուն: Մի՞թե սա արդարացի բան ե: Յեվ դեռ հետեւիցս ընկած՝ ասում են. «Ա՛յ, դո՛ւ, ագուավ»: Բայց դու նկատել ես, վոր յես ուրիշներից ավելի լավ և գեղեցիկ եմ: Ասենք, իմ մասին կարիք չկա այդ ասելու, այդ՝ իրենք են ստիպում: Ճիշտ չե՞ արդյոք:

Դեղձանիկն ամեն բանի հետ համաձայնվում եր:

— Ալո, դու մեծ թռչուն ես:

— Ա՛յ, բանն ել հենց դա յե: Զե՞ վոր թութակներին ել վանդակում են պահում, խնամում, իսկ թութակն ի՞նչով ելավ ինձնից: Նա ամենահիմար թռչունն է: Նա միայն գիտե գոռալ, փնթփնթալ, բայց վոչ վոք չի կարողանում հասկանալ, թե ի՞նչի մասին ե փնթփնթում: Այդպես չե՞:

— Ալո, մեզ մոտ ել մի թութակ կար և սարսափելի կերպով բոլորին ձանձրացնում եր:

— Ուրիշ այնքան թռչուններ կան, վորոնք հայտնի չե թե ինչու համար են ապրում: Որինակ, սարյակները, մարդ չի ել իմանում, թե վորտեղից են այնպես խելագարի նման թռչուն-գալիս, ամառն ապրում ու նորից թռչում: Ծիծեռնակները նույնպես, յերաշտահավերը, սոխակները.

Քիչ կան ալդպիսի անպիտաններ: Ընդհանուրապես վոչ մի լուրջ, իսկական թռչուն չկա... Հենց մի քիչ ցուրտն ընկավ թե չե, բոլորն ել մի դլուխ փախչում են, ուր վոր աչքը կտրի:

Իսկապես Ագուավն ու Դեղձանիկը իրար չելին հասկանում: Դեղձանիկը չեր հասկանում, թե ինչ բան ե ազատ կյանքը, իսկ Ագուավն՝ անազատը:

— Մորաքո՛ւր, միթե ձեզ վոչ վոք հատիկ չի ձգում յերբեք, — զարմանում եր Դեղձանիկը: Գոնե մի հատիկ:

— Ինչ հիմարն ես դու: Ի՞նչ հատիկ, ի՞նչ բան: Դու միայն նավիր, վոր մեկն ու մեկը քեզ փայտով կամ քարով չսպանի: Մարդիկ շատ են չար:

Վերջին մտքի հետ Դեղձանիկը վոչ մի կերպ չեր կարողանում համաձայնվել, վորովհետև մարդիկ կերակրում ելին իրեն:

Գուցե Ագուավին ե ալդպես թվում: Ասենք, Դեղձանիկն ինքն ել շուտով սախլված յեղավ համոզվել, վոր մարդիկ չար են: Մի անգամ նա նստած եր ցանկապատի վրա, յերբ հանկարծ, հենց նրա գլխի վրալով, մի ծանր քար սուլեց: Փողոցով գնում ելին դպրոցականները, ցանկապատի վրա տեսան Ագուավին, բա վո՞նց չքարել նրան:

— Հը՛, ինչպես ե, հիմա տեսա՞ր, — հարցըրեց ագուավը, մագլցելով կտուրի վրա: Ախ, մարդիկ բոլորն ել ալդպե՞ս են:

— Մորաքո՛ւր, գուցե դուք նեղացըրել եք նրանց մի վորևե բանով:

— Բոլորովին, և վո՞չ մի բանով: Ուղղակի այնպես, չարանում են: Նրանք բոլորն ել ատում են ինձ:

Դեղձանիկի մեղքը յեկավ խեղճ ազուավի համար, վորին վոչ վոք, վո՞չ վոք չեր սիրում: Զե՞ վոր ալդպես ապրել չի կարելի:

Ընդհանուրապես բավականաչափ թշնամիներ կային: Որինակ՝ վորձ կտու վասկան... ինչպիսի յուղոտ աչքե-

ըով եր դիտում նա բոլոր թռչնիկներին, քնած ձևանում, և Դեղձանիկն իր սեփական աշքերով ե տեսել, թե ինչպես նա, կատուն, մի փոքրիկ և անփորձ ծիտիկի բռնելով՝ նրա բարակ ու նուրբ վոսկորները ճոճոցը եց, իսկ փետուրները՝ քամուն տվեց։ Ո, սարսափելի՛ յե՛ Հապա բազենե՞րը, դրանք ել պակասը չեն. լողում են ոդի մեջ և հետո քարի պես ընկնում մի վորեւ անզգուց թռչնիկի վրա։ Դեղձանիկը նույնպես տեսավ, թե ի՞նչպես բազեն քարշ տվեց հավի ճուտին։ Բայց Ագուավը չեր վախենում վո՛չ կատուներից, վո՛չ ել բազեներից, նա ինքն ել նույնպես դեմ չեր բերանը քաղցրացնել փոքրիկ թռչնիկներով։ Սկզբում Դեղձանիկը չեր հավատում արդ բանին, մինչև վոր համոզվեց իր սեփական աշքերով։ Մի անգամ նա տեսավ, թե ինչպես ճնճղուկներն ամբողջ լեռամով ընկել են Ագուավի հետեւից. թռչում, ճկում, ծղըրտում են։ Դեղձանիկը սարսափելի վախեցավ և թագնվեց ընում։

— Յե՛տ տուր, լե՛տ տուր, — կատաղի կերպով ճշում ելին ճնճղուկները, թռչելով Ագուավի բնի վրայով, — այս ի՞նչ ե՛ Սա ավազակութիւն ե՛։

Ագուավը ներս ընկավ իր բուշնը, և Դեղձանիկը սարսափով տեսավ, վոր նա իր ճանկերում բռնած մի անշունչ և արյունլվա ծիտիկ բերեց։

— Ի՞նչ եք անում, մորաքուցր։

— Լոիր, — փրփրեց Ագուավը։

Նրա աշքերը սարսափելի ելին և ալնպես ելին փայլում, վոր Դեղձանիկը յերկուլից փակեց իր աշքերը, վորպեսզի չտեսնի, թե Ագուավն ինչպես ե քրքրելու դըժքախտ ծիտիկին։

«Չե՞ վոր ալզպես մի որ ել ինձ կուտի նա»— մըտածեց Դեղձանիկը։

Բայց Ագուավը, նախաճաշելով, ամեն անգամ ավելի բարի յեր դառնում։ Կտուցը մաքրում եր, մի վորեւ ճկուղի վրա հարմար նստում եր և քաղցը նիրհում։ Ընդհանրապես

ինչպես վոր նկատել եր Դեղձանիկը, մորաքուցրը սարսափելի շատակեր եր և վոչնչից չեր խորշում։ Նա կամ հացի կտոր եր քարշ տալիս, կամ հոտած մսի կտոր, կամ կերակը մնացորդ, վորը գտնվում եր կեղտաջրի փոսերում։ Այս վերջինը Ագուավի սիրած զբաղմունքն եր, և Դեղձանիկը վոչ մի կերպ չեր կարողանում հասկանալ, թե ի՞նչ բավականութիւնն ե քրքրել կեղտաջրի փոսերը։ Ասենք Ագուավին ել դժվար եր մեղաղըել։ Նա ամեն որ անքան եր ուտում, ինչքան վոր քսան դեղձանիկ չելին կարող ուտել։ Յեվ Ագուավի ամբողջ հոգու միայն ուտելն եր։ Նստում եր մի վորեւ տեղ—կտուրին և դիտում։

Յերբ Ագուավը ծուլանում եր կերակուր փնտոել, նա դիմում եր խորամանկութիւն։ Տեսնում եր, վոր ճնճղուկները մի ինչ վոր բան են քրքրում՝ իսկուն և անանում եր։ Իբրև թե կողքով ե թռչում, բայց և գոռում եր ամբողջ կոկորդով։

— Այս, ժամանակ չունիմ... բոլորովին ժամանակ չունիմ...

Մոտենում եր, բռնում վորախն և հալդա։

— Զե՞ վոր դա լավ բան չե, մորաքուցր, — նկատեց մի անգամ վրդովկած Դեղձանիկը։

— Լավ բան չե։ Իսկ յերբ յես շարունակ ուտել եմ ուզո՞ւմ...

— Ուրիշնե՞րն ել են ուզում ուտել։

— Դե, ուրիշներն ինքներն են իրենց մասին հոգտանում։ Զե՞ վոր ձեզ պես բոլոր քնքուցներին վանդակներում են կերակում, իսկ մենք ամենքս ել ինքներս պլիտի մեզ համար բան ճարենք։ Յեվ մեկ եր, քեզ և ճնճղուկի համար, արդիոք շա՞տ բան և հարկավոր։ Մի քանի հատիկ կտցահարես, և արդեն ամբողջ որը կուշտ ես։

Յ.

Ամառն ա՞հ կատելի կերպով անց կացավ։ Արել կարծես թե ցրտեց, իսկ որը կարճացավ։ Անձրևներն սկսեցին, սառը քամի փչեց։ Դեղձանիկն իրեն ամենազըդ-

բախտ թուչունն եր համարում, մանավանդ, լեռք անձրև
եր գալիս: Իսկ Ազուավն այնպես եր պահում իրեն, վոր
կարծես թե վոչինչ չի նկատում:

— Ե՞ն, ի՞նչ անենք, վոր անձրև ե գալիս,— զար-
մանում եր նա, — գալիս ե, գալիս ու գաղարում:

— Զե՞ վոր ցուրտ ե, մորաքուլը: Ա՛խ, վորքան
ցուրտ ե:

Առանձնապես վատ եր լինում գիշերները: Թրջված
Դեղձանիկը շարունակ դողում եր, իսկ Ազուավը բարկա-
նալով ասում եր.

— Ա՛յ քեզ քնքուշիկ, իսկ ի՞նչ պետք ե անես, լեռք.
ցուրտը փշի և ձյունը դա:

Ազուավի համար նույնիսկ վիրավորական եր: Այդ
ի՞նչ տեսակ թուչուն ե, վոր անձրեկից ել, քամուց ել,
ցրտից ել ե վախենում: Այդպես, ապրել չի լինի լուս
աշխարհում: Յեկ նա կրկին սկսեց կասկածել Դեղձանիկի
թուչուն լինելու մասին: Հավանորեն ձևացնում ե միայն,
վոր թուչուն ե:

— Ճիշտ եմ ասում, մորաքուլը, իս անենախկական
թուչունն եմ, — համոզում եր Դեղձանիկը արցունքն աչ-
քերին: Միայն թե յես մրսկան եմ:

— Իսկ ինձ շարունակ թվում ե, վոր դու ձևացնում
ես միայն, թե թուչուն ես:

— Զե՞, ճիշտ եմ ասում, չե՞մ ձևացնում:

Դեղձանիկը լերեմն միաք եր անում իր վիճակի
մասին: Թերեւա ավելի լավ կլիներ մնալ վանդակում: Այն-
աեղ թե տաք ե լինում, և թե կուշտ: Նա նույնիսկ մի
քանի անգամ թուավ գնաց այն պատուհանի մոտ, վորտեղ
դրված եր իր վանդակը: Այնտեղ արդեն լերկու նոր դեղ-
ձանիկներ ելին նստած և նախանձում ելին նրան:

— Ա՛խ, ինչ ցուրտ ե, — վորորմելի կերպով ճվում
եր սառչող Դեղձանիկը, — տուն թողեք ինձ:

Մի անգամ առավոտան, յերբ Դեղձանիկը դլուխը

դուրս հանեց ազուավի բնից, նրան զարմացրեց մի մոալլ
պատկեր. մի գիշերվա մեջ գետինը ծածկվել եր առաջին
ձյունի սավանով: Չորս կողմը սպիտակ եր: Իսկ գլխա-
վորը — ձյունը ծածկել եր այն բոլոր հատիկները, վո-
րոնցով կերակրվում եր Դեղձանիկը: Մնացել եր միայն
արոսենին, բայց նա չեր կարողանում ուտել այդ թթու-
պտուղը: Մինչդեռ Ազուավը նստած կացում եր արոսե-
նին ու գովում:

— Ո՛խ, լավ պտուղ ե:

Յերկու որ քաղցած մնալուց հետո, Դեղձանիկը հու-
սահատվեց: Ի՞նչ ե լինելու սրա վերջը: Ալպիսով կա-
րելի յե մեռնել քաղցից:

Դեղձանիկը նստել եր և մտածում եր վշտացած:
Սական այդ ժամանակ նա նկատեց, վոր պարտեզ վազե-
ցին հենց այն դպրոցականները, վորոնք քարում ելին
Ազուավին: Նրանք մի. ցանց փոեցին գետնին, վրան վուշի
համեղ սերմեր թափեցին ու փախան:

— Այդ տղաներն ամենակին չար չեն, — ուրախացավ
Դեղձանիկը, գիտելով փոած ցանցը: Մորաքուլը, տղա-
ներն ինձ համար կերակուր են բերել:

— Լավ կերակուր ե, հա, — փնթինթաց Ազուավը, —
դու մտքով անգամ չանցկացնես կտուցդ այնտեղ կո-
խել: Լսո՞ւմ ես: Չենց վոր սկսես հատիկներ կտցել, իս-
կույն ցանցի մեջ կընկնես:

— Իսկ հետո ի՞նչ կլինի:

— Իսկ հետո՝ նորից վանդակ կդնեն քեզ:

Դեղձանիկը լերկմտեց. Նա թե ուզում եր ուտել, և
թե չեր ուզում վանդակ մտնել: Ինարկե ցուրտ եր, և ինքը
քաղցած, բայց և այնպես ազատության մեջ ապրելը շատ
ավելի լավ եր, մանավանդ, լեռբ անձրև չեր դալիս:

Մի քանի որ դիմացավ Դեղձանիկը, բայց հետո նա
հրապուրվեց խաբուսիկ բանով և ցանցի մեջ ընկավ:

— Ոգնություն, — վորորմելի ձախով ծղրտում եր
նա: Ել յերբեք չե՞մ անի... Ավելի լավ ե քաղցից մեռ-
նել, քան թե նորից վանդակն ընկնել:

Այժմ Դեղձանիկին թվում եր, վոր աշխարհում Ագռավի բնից ավելի լավ բան չկա: Եհ, իհարկե վոր ճիշտ ե, ցուրտ եր, իսկ ինքը քաղցած, բայց և այնպես կատարյալ ազատություն եր: Ուր ուզում եր, այնտեղ ել թռչում եր: Նա նույնիսկ լաց յեղափ: Ահա կզան տղաները և նրան նորից վանդակ կդնեն: Նրա բախտից Ագռավը թռչում եր մոտիկից և տեսավ, վոր բանը վատ ե:

— Ախ, դու հիմար... — Փնթվինթաց նա: Զե՞ վոր յես քեզ ասացի, թե ձեռք մի տա այդ խաբուսիկ բանին: Մորաքուր, ել ձեռք չեմ տա:

Ագռավը ժամանակին հասավ: Տղաներն արդեն վագում ելին, վոր բռնեն վորսը, բայց Ագռավը հաջողեց կտրել բարակ ցանցը, և Դեղձանիկը դարձլալ ազատվեց:

— Ախ, վորքա՞ն լավ ե, — ուրախացավ Դեղձանիկը, նորից իր բնում գտնվելով:

— Հապա վոր ասում ելի, թե լա՛վ ե, զգուշ կաց, — Փնթվինթաց Ագռավը:

Դեղձանիկը կրկին ապրեց Ագռավի բնում և այլևս վոչ ցրտից և վոչ ել քաղցից չեր դանդատվում: Մի անգամ ագռավը թռավ, գնաց վորսի հետևից, գիշերեց դաշտում, իսկ յերբ տուն վերադարձավ, տեսավ Դեղձանիկն ընկած ե բնում, վորքերը վեր ցցած:

Ագռավը գլուխը շրջեց, նայեց ու ասաց.

— Բա վոր յես ասում ելի, թե դա թռչուն չե՞:



Նանի՞կ, — նանի՞կ, — նանի՞կ...

Ալլոնուշկայի մի աչիկը քնած ե, մյուսը նայում ե: Ալլոնուշկայի մի ականջիկը քնած ե, մյուսը լսում ե: Հիշմա բոլորն ել հավաքվել են Ալլոնուշկայի մահճակալի մոտ, — և քաջ նապաստակը, և Արջիկը, և Ճնճղուկը, և Սեղ-Գլուխ Ագռավը, և Յորշ Յորշուկիչը: Բոլորն ել ալտեղ են, բոլորն ել Ալլոնուշկայի մոտ են:

— Հայրիկ, յես բոլորին ել սիրում եմ, — շնչաց Ալլոնուշկան: — Յես սեղ միջատներին ել եմ սիրում, հայրիկ:

Ալլոնուշկայի մյուս աչքն ել փակվեց, են մյուս ականջն ել քնեց... Իսկ նրա մահճակալի մոտ կանաչին եր տալիս գարնանացին գալար խոտը, ժպտում ծաղիկները: Ծաղիկները շատ ելին, յերկնագույն, վարդագույն, գեղին, կապույտ, կարմիր: Կանաչ կեչին գլուխը կախել եր հենց նրա մահճակալի վրա, և այնպես սիրալիր ու վաղաքանքով, ինչ վոր բան եր քչփշում: Իսկ արեգակը լուսավորում եր, ափազը դեղնում և ծովի կապույտ ալիքն իր մոտ կանչում Ալլոնուշկային:

Քնի՞ր, Ալլոնուշկա, կազդուրվիր:

Նանի՞կ, — նանի՞կ, — նանի՞կ...



Յ Ա Ն Կ

Նախահեքյաթ	Եջ
Հեքյաթ Յերկար-Ականջ Կարճ Պոչ քաջ նապաստակի մասին	3
Հեքյաթ Յերկար Քիթ Մոծակ Մոծակիի և Կարճ պոչ բրդոտ Միշկայի մասին	4
Հեքյաթ Ճնճղուկ Ճնճղուկի և Յորշ Յորշովիչի և Խողովակ մաքրող ուրախ Յաշայի մասին	8
Հեքյաթ Սևագլուխ Ագրավիկիի և Դեղին թոշուն Դեղձանիկի մասին	15
	24



ՀՀ Ազգային գրադարան




NL0391357

3947

711

ԳԻԱԸ 90 ԿՈՊ.



Д. МАМИН-СИБИРЯК
АЛЕНУШКИНЫ
СКАЗКИ
ГИЗ ССР АРМЕНИЙ, ЕРЕВАН, 1936 г.